ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.09.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/132

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.09.2018թ. թիվ 26-3/[1253621]-18 գրությամբ «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 24.05.2018թ. թիվ 01/61-11765 գրության հիման վրա, 03.09.2018թ. թիվ 26-3/[1253621]-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ որևէ դիրքորոշում չի ներկայացրել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/132 ընթացակարգի շրջանակներում 07.09.2018թ. ժամը 10:50-ին և 11.09.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.05.2018թ. թիվ 01/61-11765 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/185» ծածկագրով կազմակերպված ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ն:

14.05.2018թ. ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասով հարցում է կատարվել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե:

17.05.2018թ. ստացվել է պատասխան՝ ըստ որի Ընկերությունն ունի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ՝ 668 176 ՀՀ դրամի չափով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Կարգի 44-րդ կետի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթներով՝ գնահատող հանձնաժողովն Ընկերության հայտը գնահատել է անբավարար և մերժել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/132 ընթացակարգի շրջանակներում 07.09.2018թ. ժամը 10:50-ին և 11.09.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված

նիստերի վերաբերյալ, 11.09.2018թ. ժամը 10:30-ի նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>ՍՑ-ԱՄ-2018/132 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ԱՄ-2018/132 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար շախմատային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/185» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 11.05.2018թ. հայտ է ներկայացրել «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/185» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.05.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացված որոշմամբ «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

4. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 17.05.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 668 176 ՀՀ դրամի չափով:***

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.05.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 03.09.2018թ. թիվ 26-3/[1253621]-18 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 24.05.2018թ. թիվ 01/61-11765 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրությունը, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 21.06.2018թ. թիվ ՍՑ-ԱՄ-2018/73 որոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե '

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը

համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար շախմատային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/185» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 11.05.2018թ. հայտ է ներկայացրել «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/185» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.05.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացված որոշմամբ «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 14.05.2018թ. համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 17.05.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 668 176 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.05.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԱՄ-2018/73 ընթացակարգի շրջանակներում համապատասխան հարցմամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով հայտնել, թե «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ի մոտ հայտը ներկայացնելու օրվա՝ ***09.05.2018թ.*** դրությամբ արձանագրված ***667 937 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորությունն*** առաջացել է վերջինիս գործողությունների և վարքագծի հետևանքով և առկա է արդյոք վերջինիս մեղքը, թե ստեղծված իրավիճակը պայմանավորված է հարկային մարմնի կողմից ներդրված նոր համակարգի աշխատանքով:

Ի պատասխան ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վերոհիշյալ գրության՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրությամբ հայտնել է, որ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով, 2018 թվականի հունվարի 1-ից սկսած, միասնական հաշվի միջոցով մարվող հարկային պարտավորությունների մարման նպատակով վճարումները կատարում են միասնական հաշվին: Հարկային պարտավորությունների կատարման վերջնաժամկետները սահմանված են օրենսգրքի համապատասխան բաժիններով, իսկ հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման կարգը՝ օրենսգրքի 319-րդ հոդվածով: Հարկային պարտավորությունների մարման կարգը սահմանված է օրենսգրքի 325-րդ հոդվածով, իսկ վերջինիս վերաբերող անցումային հարկային հարաբերությունների կարգավորումները՝ օրենսգրքի 456-րդ հոդվածով: Նույն գրությամբ

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը հայտնել է, որ վերոնշյալ կարգավորումների ծրագրային ապահովման ներդրումը կրում է պիլոտային բնույթ, ուստի անհարժեշտ է հաշվի առնել 2018 թվականի հունվարի 1-ից հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման ու հարկային պարտավորությունների մարման նոր կարգին հարկ վճարողների իրազեկված չլինելու հանգամանքը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրությունը և հաշվի առնելով Ընկերության իրազեկված չլինելու հետևանքով ժամկետանց հարկային պարտավորություն արձանագրվելու հանգամանքը, որոշել է Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԱՄ-2018/73 ընթացակարգը մերժել:

Ուսումնասիրելով ՍՑ-ԱՄ-2018/132 ընթացակարգի շրջանակներում Պատվիրատուի կողմից ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև հաշվի առնելով «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/185» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով Ընկերության կողմից ներկայացված հայտի ամսաթիվը՝ 11.05.2018թ., ինչպես նաև Ընկերության մոտ արձանագրված ժամկետանց հարկային պարտավորության չափը, համադրելով դրանք ՍՑ-ԱՄ-2018/73 ընթացակարգի շրջանակներում ուսումնասիրված նյութի հետ, գտնում եմ, որ սույն ընթացակարգի շրջանակներում նույնպես կիրառելի է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրությամբ արտահայտված դիրքորոշումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած

պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 17.05.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա՝ 11.05.2018թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 668 176 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը: Միևնույն ժամանակ ուսումնասիրելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրությունը, գտնում եմ, որ «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ն «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/185» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում չի խախտել ստանձնած պարտավորություն, քանի որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրության մեջ մատնանշված պատճառներով, առկա է Ընկերության իրազեկված չլինելու հետևանքով ժամկետանց հարկային պարտավորություն արձանագրվելու իրավիճակը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.09.2018թ. թիվ 26-3/[1253621]-18 գրությամբ «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 09809097) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**